Ինչպէս վերեւ կը տեսնուի Վարդան վրդ. վախճանած է ՌՃԾԳ (=1704)ին (տե՛ս նաեւ Մանանայ, էջ 358), եւ մարմինը թաղուած է Ամրտօլի վանքի եկեղեցիին խորանին առջեւ, վանքին հիմնադիր Բարսեղ Բաղիշեցիին և իր դաստիարակ նշանաւոր Խաչատուր վրդ.ի գերեզմաններու կողքին։

Անոր տապանագիրն է հետեւեալը.

«Ի տապանի աստ ամփոփի
Մարմին մաքուր մեծ հռետորի,
Տեառն Վարդանայ փաղերայի.
Արի և քաջ վարժապետի,
Խարազնազգեայ ճկնաւորի,
Աստուածաբան վարդապետի,
Որ ի հովտէս այս տրտմալի
Ել առ Փրկիչն ի յոյսն բնաւի,
Ի քսաներեք յոբելինի,
Երեք թուով յաւելորդի
(ՌՃԾԳ = 1704)
Որ հանդիպիք տուք զողորմի։»
(Անդ. Գիրք ժ. էջ 82)։

ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ԳԱՍՊԱՐԵԱՆ, ՄՈՒՐԱՏՋԱՑԻ. — Մբ. Ծ. 1871ին. Ձռ. 1898ին. հսկող ժառ. վարժ.ի (1894—95). Առ. փոխանորդ Պրուսայի 1905ին, այժմ պաշտօնով կը գտնուի Ամերիկայ։

ՎԱՐԴԱՆ ՎՐԴ.— Մբ. Լս. Ս. Յարութեան Գրիգոր Պարոնտէր պտրք.ի ժամանակ։

ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. — Մբ. Երուսաղէմի։ Յովակիմ պատրիարք զինքը Մովսէս վրդ.ին հետ 1791ին պատուիրակ կը ղրկէ Ռուսաց Կատարինէ կայսրուհիին եւ Վրաց Հերակլ թագաւորին մօտ; օրհնութեան գիրեր եւ ընծաներ մատուցանելու պաշտօնով։ Կայսրուհիին կը նուիրէ նաեւ կենաց փայտը պարունակող ոսկի խաչ մը (Ժպկ. հատ. Բ. էջ 118)։

ՎԱՐԴԱՆ ՎՐԴ.— 1321ին Արևելցի Վարդան պտրք.ի օրով, ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. ՄՁ. Թ. 939 յիշատակարանին համաձայն. այս ուխտաւորութեան ժամա-